

Բ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, ԼԵՂԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ
ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ XIV—XIX ԳԴ.,
ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, Երևան, 1992, 452 էջ:

Հայ գաղթաշխարհի ամենաուշագրավ շերտաններից է լեհահայ գաղութը՝ ավելի քան հազարամյա հարուստ պատմությամբ, որ արդեն երկու դար է, ինչ քանասերների, պատմաբանների, արվեստաբանների աշխույժ հետաքրքրության առարկա է: Չնայած այս հանգամանքին, մեզանում շատ քիչ քան էր հայտնի այդ երկրում հայերի կատարած մշակութային դերի մասին: Հայտնի էր, օրինակ, որ հայ էին ԺԷ դարի չորս նշանավոր քանաստեղծները՝ Սեբաստիան Կլյոնովիչը, Բարթոլոմեյ և Ժիմոն Զիմորովիչները, Ժիմոն Ժիմոնովիչը: Բայց այս անունները մեզ գրեթե ոչինչ չէին ասում, լցված չէին որոշակի քովանդակությամբ: Ովքեր են, ինչ են արել, ինչ վաստակ ունեն: Ընդ որում, Ժիմոն Զիմոնովիչի մասին հայտնի էր անգլիացի գրականագետ Թոմաս Սեքստի բարձր գնահատականը. նրա ներողները հավասարը չունեն ամբողջ լատիներեն գրականության մեջ: Գնահատականի կրճիղը խորապես գիտակցելու համար հարկ է ուշադրություն դարձնել համեմատության դաշտին. շրջափվում է ոչ թե ինչ-որ մանկուրտական կամ թրթալկան, այլ Նորին մեծություն Հռոմեական գրականության հետ կապված շատ անոթ խնդիր: Ինչևէ. այս սուղ տեղեկությունների համար հայ ընթերցողը պարտական էր երջանկահիշատակ Բոհդան Գեմբարսկուն, որ դարիս 50-ական թվականներին այցելեց Հայաստան և գրական մամուլում թողեց մի քանի թոռցիկ դիտողություն և փաստեր՝ Լեհաստանում հայերի ստեղծած արժեքների մասին:

Առաջին ծանոթությունից կես դար է անցել արդեն, և մենք հնարավորություն ենք ստացել մոտիկից ճանաչելու հիշյալ վաստակավորներին ու նրանց լծակից մտավոր գործիչներին: Ահավասիկ գրախոսվող գրքի հեղինակը փորձել է ներկայացնել լեհահայոց անցյալի, մշակույթի, գրականության զարգացման հարընթացը, ցույց տալ նաև Լեհաստանի հայերի ներդրումը ասպնջական ժողովրդի մշակույթի, գիտության, հասարակական կյանքի այլևայլ ասպարեզներում: Այս տարողունակ խնդիրն ի կատար ածելու համար նա ուրվագծում է գաղութի կազմավորման, քարզավաճման ու մարման պատմությունը, յուրաքանչյուր տեղաշարժ պայմանավորող քաղաքական, ընկերային, հասարակական, գաղափարական-կրոնական հանգամանքները: Այսպիսի լայն համապատկերի մեջ է, որ Բ. Բարսեղյանը բավական հանգամանորեն դիտարկում է ճարտարապետության, կերպարվեստի, երաժշտության, գրչարվեստի, լուսավորության ու դպրոցական թատրոնի, այնուհետև, իհարկե, նաև գրականության անցած

ճանապարհը, որ յուրօրինակ մի կորագիծ է, հայերի՝ ազգային ավանդության շարունակման մտահոգությամբ ու ձգտումով, կրած արևմտյան և լեհական անուրանալի ազդեցությամբ, դիվանագիտական մաքստամբ ու տեղատվությամբ, վերջապես, կաթոլիկությունը ընդունելով և աստիճանաբար ազգային արմատներից օտարվելով: Այս ամենով հանդերձ՝ ինչպես հայ, նույնպես և լեհական մշակույթի մեջ շրջափելի նվաճումներ արձանագրելով: Ծատ հայեր մշակույթի բնագավառում հասնելով արժանավայել դիրքի՝ Լեհաստանին մատուցած ակնառու ծառայությունների համար արժանացել են այլևայլ պատիվների, ստացել ազնվականի տիտղոս: Եվ իզուր չէ, որ հայերը մեծ հեղինակություն էին վայելում այդ երկրում ընդհանրապես: «Նրանք,— գրել է Ցան Լիսիցկին 1580-ին,— ազնվաբարո, հումանիստ, սրտաբաց, մեծահոգի, ազատախոհ և միաժամանակ շրջափայց, ներբարբարո, ունևոր մարդիկ են՝ գեղեցիկ դիմագծերով, սև մորուքներով, մկրիված արևելյան երկրների առևտրին, որոնք քրիստոնյաներին փրկագնում են ստրկությունից և առատաձեռն են բարեգործությունների մեջ:

Լեհաստանի, Ուկրաինայի, Մոսկվայի ու Երևանի պահոցներում ու թանգարաններում Բ. Բարսեղյանն ուսումնասիրել է ամենաբազմազան նյութեր՝ կրոնական, պատմական, գեղարվեստական ստեղծագործություններ, գիտական, իմաստասիրական աշխատություններ, հատուկ ուշադրություն է դարձրել գաղութի ազգային դիմագծի զարգացմանն ու հեղաբեկվածը, ԺԷ—ԺԹ դարերում գաղութի քայքայման շրջանի նոր ծագող խնդիրներին ու պատճառներին, վիպասաշտության շրջանում նկատվող ազգային ինքնագիտակցության ազդակներին ու միտումներին: Հեղվելով ազգային գրական հարուստ փորձի վրա և «կրեելով եվրոպական վերածննդի ու Բարոկոյի ազդեցությունը,— ինչպես նկատում է հեղինակը,— լեհահայ գրականությունը դարի կեսից է մեզ ներկայանում իր յուրատիպ դիմագծով»: Բայց Ռեսազոտողն արդեն ԺԶ—ԺԷ դարերում գրականության ասպարեզում երկփեղկում է նկատում: Սա այն շրջանն էր, երբ լեհերն իրենք սկսում են մշակել ազգային գրականություն, լատիներենի փոխարեն արմատավորելով իրենց մայրենին: Մինչդեռ լեհահայ գաղութը հազարամյա ավանդությամբ շարունակում էր գրականություն ստեղծել հայերենով, և հավանաբար սա նա կարող էր խանդի առիթ ծառայել:

Վեցհարյուրամյա մշակութային պատմությունը շարադրելու համար հեղինակը հանգամանորեն վերստեղծում է գաղութի վարչա-

Քաղաքական, կրոնական, գաղափարական, տնտեսական իրապատկերը՝ խնդրո առարկա ժամանակաշրջանում: Այդ ընթացքում լեհահայերի ստեղծած վիթխարի գրականությունը լեզվի և ոգու տեսակետից կարելի է բաժանել երկու մասի, որ և անում է Բ. Բարսեղյանը: Դրանցից մեկն ընդգրկում է այն հեղինակներին, ովքեր ստեղծագործում էին հայերեն՝ ամուր փարած հայրենի մշակույթին ու եկեղեցուն, շարունակում էին մաշտոցյան ավանդույթը: Մյուս խումբն այն գործիչներից էր քաղկացած, որ ընդունելով կաթողիկե դավանանք, գրել են լատիներեն ու լեհերեն, հեռացել մայրենի մշակույթից հարստացնելով ու նոր որակ թերելով լեհ գրականությանը, ձեռք բերելով համաեվրոպական առճանշում:

Լայնածավալ այսպիսի ծրագրով անաշնորդ վելիս գրեթե անհնար է առանձին մատենագրական երկերի պատմաբանասիրական քնննությունն ու գեղարվեստական վերլուծությունը, որ այնուամենայնիվ ջանացել է կատարել աշխատության հեղինակը: Իսկ Լեհաստանի հայ մտավոր գործիչները մատենագրություն են ստեղծել չորս լեզվով՝ հայերեն, լատիներեն, լեհերեն և ղիչաղերեն: Հայերենը դպրության լեզու էր գաղութի հիմնավորման օրերից (երբ երկրի գրական լեզուն լատիներենն էր, որն արմատավորվել է մետավորապես ԺԳ դարում) մինչև ԺԷ դ., ղիչաղերենը կիրառվում էր ԺԶ-ից մինչև ԺԷ դարակես «կամ փոքրինչ ավելի», իսկ լեհերենը՝ ԺԶ դ. կեսերից: ԺԶ—ԺԷ դարերում երկվեղկում է նկատվում Լեհաստանի գրական կյանքում: Եվ եթե մինչև ԺԷ դ. սկիզբը հայերն ազդում էին լեհական կյանքի վրա, սպա դարավերջից դիտվում է հակառակ երևույթը. որանք կրում են ընդհանրապես Արևմուտքի և մասնավորաբար Լեհաստանի կրոնական գաղափարախոսության, բարքերի և, իհարկե, մշակույթի ազդեցությունը: Այս շրջանում է, որ լեհերն սկըսում են ստեղծել բուն ազգային գրականություն՝ դուրս մղելով աստիճանաբար լատիներենը և հաստատելով մայրենի իրավունքը: Անկման այս շրջանի մշակույթը Բ. Բարսեղյանը դիտում է իբր «ազգայինի շարունակությունն և լեհականին միահյուսվելու սկիզբ»: Դա նշանակում է, որ երբ լեհերենը դարձավ գրական լեզու՝ նրա առաջին մշակողների մեջ էին հայերը:

Մշակութային կյանքի յուրօրինակ այս խառնարանում ապրող լեհահայերին կարելի է բաժանել առնվազն չորս խմբի՝ ա) պանդուխտներ, որոնց ճակատագիրը բերել է Լեհաստան. բ) այդ երկրում ծնվածներ, որոնք ձեռք են բերել մի երկրորդ հայրենիք. գ) սերունդ, որի համար Հայաստանը սուկ «անխնիների երկիր» էր և, վերջապես. դ) լիովին ուժացածներ: Ըստ երևույթին հարկավոր էր նախապես ճշտել լեհահայ հասկացության բովանդակությունը, հետևաբար՝ նաև լեհահայ մշա-

կույթինը: Բ. Բարսեղյանը հակված է վեց հարյուրամյակի ընթացքում Լեհաստանում հայերի և հայկական ծագում ունեցող գործիչների ստեղծած ամբողջ քառալեզվյան մատենագրական արտադրանքը համարելու լեհահայ մշակույթ, որ առնվազն վիճելի է: Եվ նկատի ունենալով նրա պատրաստվածությունը (առաջին հերթին լեհերենի իմացությունը), մենք այս աշխատությունից ակնկալում էինք լեհերեն (գուցե նաև լատիներեն) լեզվով ըստեղծագործողների դիմանկարները՝ նրանց գործունեության ու երկերի առավել խորհուն դիտարկումով: Մեր կարծիքով հարկ չկադ անդրադառնալու Միևսա և Հակոբ Թոխաթցիների, Պարսամ Տրապիզոնցու, Սիմեոն Լեհացու: և այլոց ժառանգությանը, մասնավանդ որ դրանք բավարար չափով ուսումնասիրված են և ծանոթ հայ ընթերցողին: Սակայն գրքի հեղինակը տեղ է խնայել լեհերեն ստեղծագործողների հաշվին: Դրանցից ոմանց կապակցությամբ, օրինակ, այսպիսի վերապահում է անում. «Սույն հետազոտությունը չծանրաբեռնելու նպատակով» չենք թվարկում նրանց գործերը (տե՛ս, օրինակ, էջ 124), մոռանալով, որ առաջին հերթին սրանց ստեղծագործությունները կհետաքրքրեն հայ ընթերցողին իբրև նորություն: Մեկ ուրիշ առիթով (էջ 170) հեղինակն այսպիսի անցում է կատարում. «Առաքելովիչի ժամանակագրության բնությունը թողնելով մտտ ապագային, ներկայացնենք նույն դարի հայ նշանավոր պատմիչ Առաքել Դավրիժեցուն», և կամ 178 էջում՝ «Մեր կողմից ուսումնասիրվող լեհահայ պատմագրություն մեջ հայաստանցի Առաքել Դավրիժեցու երկը վերջինն է»: Քաղելով Սադոկ Բարոնչի 1854 թ. արած դիտությունը, թե լեհական հողի վրա ապաստանած ժողովուրդներն իրենց հետ բերել են սեփական ավանդույթներ, որոնք միահյուսվել են տեղացիների ավանդույթներին, Բ. Բարսեղյանը հարում է. «Նկատենք, որ այդ հարցը ընդհանրապես ուսումնասիրված չէ և բանասիրական-գրականագիտական մանրագնին հետազոտություն է պահանջում» (էջ 373): Կարծում ենք՝ իր իսկ առաջադրած այս կարգի հարցերին է, որ պիտի հատուկ ուշադրություն դարձնեք աշխատության հեղինակը:

Գրքում կան որոշ վիճելի պնդումներ ու եզրակացություններ: Վիճանյի Մխիթարյան մատենադարանի թ. 464 հայատառ լեհերեն ձեռագիրը բարոյական աստվածաբանության մի ձեռնարկ է, որը Հ. Տաշյանի համոզմամբ պատկանում է Աստվածատուր Ներսիսյան-Ներսիսովիչի գրչին: Այս և մեկ այլ ձեռագրի առնչությամբ Հ. Անապյանն առարկել է իր մեծանուն նախորդին. «Նկատի ունենալով, որ այդ երկու ձեռագրերն ընդօրինակված են 1678 թ. և անհանուն ընդօրինակողն այդ ժամանակ, ինչպես ինքն է նշում, Լր «ծերացեալ տիօք», չենք կարող նույն համարել Աստ.

Ներսիսյանի հետ, որովհետև վերջինս 1678 թ. կլիներ հազիվ 26 տարեկան մի երիտասարդ¹: Նույն խնդրին անդրադառնում է նաև Բ. Բարսեղյանը. «Մեր կարծիքով, եթե, իհարկե, այլ պատճառաբանություններ չլիներ, վերոհիշյալ գործերից անաշինը Ներսեսովիչի գրչին չէր կարող պատկանել ոչ այն պատճառով, որ նա երիտասարդ էր, այլ այն պարզ տրամաբանությամբ, որ այդ աշխատությունը հայատառ լեհերենով գրելու հարկ չուներ, քանի որ քաջ տիրապետում էր մայրենի լեզվին» (էջ 182): Այս «տրամաբանությամբ» պիտի ենթադրել, թե Հակոբ Պարոնյանը մայրենի լեզվին չէր տիրապետում, երբ գրում էր հայատառ թուրքերեն: Բայց չէ՞ որ գրքերը գրվում են ուրիշների, ընթերցողի համար:

Ծավոք սրտի, բավական շատ են խմբագրական և սրբագրական կարգի սխալները: Հղումները տրված չեն մեկ միասնական համակարգով: Այնուհետև, հաճախ կարելի է հանդիպել անհաջող ձևակերպումների, որ թերևս կարող էին ուղղել խմբագիրները: Բ. Բարսեղյանը Յու. Դեցյուշի խոսքը անհաջող է թարգմանել. «Լեհաստանի մի մասը օկուպացված է հայերի կողմից» (փխ. «... մասը գրադեցնում են հայերը». էջ 44): Մի այլ տեղ տրե՛նուսը (ինչո՞ւ ոչ թրե՛նու) թարգմանված է լաց՝ փխ. ողբի: Կան բառօգտագործման սխալներ, անհարկի օտարաբանություններ: 258 էջում, օրինակ, մեղանչել բայը գործածված է սխալ, գրեթե հակառակ իմաստով, Օսմանյան Բ. դուռը դարձել է պորտա (40), չափածո վիպակը՝ պոետական վիպակ (846): Անտեղի է հետևյալ օտարաբանությունների կիրառությունը. կոլորիտային լեզու (14), պերոցես (25), տրանզիտ առևտուր (89), դիդակտիկ (104), կուլտուրա (112), արխիվարի (203), պամեզոիրիկ (800), էսթետիկական (319) և այլն: Առավել անցանկալի են ա-

նունների աղավաղումները. Բարսեղ Մոնը և Սահակ Ջորսիորեցին դարձել են Բարսեղ Տչոն և Ջորսիորեցի (82)՝ Ղևոնդ Հովհաննիսյան և Մկրտիչ Պոտուրյան հայերը՝ Հ. Հովհաննիսյան և Հ. Պոտուրյան (219): Մխիթար Գոշի «Դատաստանագիրքը», որ ավարտվել է 1184 թվականին, համարվել է ԺԲ—ԺԳ դարերի ստեղծագործություն (29):

Գրքի շատ էջերում (111, 164, 208, 228, 254, 257—258, 288 և այլն) խտվում է Բարոկկո դարաշրջանի գրական երևույթների մասին, սակայն միշտ չէ, որ հստակ է, թե հեղինակն ո՞ւմ կամ ի՞նչ նկատի ունի լեհահայ գրող, լեհահայ գրականությունը ասելով: Իհարկե, երբեմն կարելի է կասել, որ խոսքը լեհերենով ստեղծված գրականությանն է վերաբերում: Այս դիտարկեցիք միայն մեկ անդրադարձ կա հայ գրականությանը. «... հիմք ունենալով ազգային հարուստ գրականությունը և կրելով եվրոպական վերածննդի ու Բարոկկոյի ազդեցությունը, լեհահայ գրականությունը XVI դարի կեսից է մեզ ներկայանում իր յուրատիպ գծերով» (191): Կարծում ենք, սահմանափակ էր այս դեպքում պատասխանել նաև բնականաբար ծագող հարցին՝ հայ գրականության մեջ ի՞նչ էական կամ երկրորդական դրսևորումներ է ունեցել այդ դարաշրջանի ոճը:

Ինչևիցե: Կարևորն այն է, թերևս, որ գրքի բազմաթիվ այլ էջեր գալիս են հարստացնելու մեր պատկերացումները լեհահայ գաղութի, այդ երկրում հայերի կատարած անուրանալի մեծ դերի մասին: Կարելի է ասել՝ սա մեր ծանոթության երկրորդ աստիճանն է: Մյուս, առավել անհրաժեշտ քայլը պիտի լինի հայածագում գրողների՝ լատիներենով ու լեհերենով ստեղծած գեղարվեստական արժեքների հայերեն թարգմանությունը, և ցանկալի է, որ Բ. Բարսեղյանը համղես գա նաև այս կարևոր գործը նախաձեռնողի ու կազմակերպչի դերում:

¹ Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Բ, Երևան, 1976, էջ 690—691: